

8
V-67

188



229

37

Quarantine

EX 2003

011

Հայոց պատմութեան և պատմութեան գիրք պահպան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՎԱ-ՔԵԿ ԼԱԼԱՅԵԱՆՑԻ

1954

816

5-67

Խ 831

ՄԻ ԿԱՐԹԻԼ ԱՐԻԻՆ

~~800
146-ԱԱ~~

~~1001
265~~


Ա ամսաթեամ է յօդուած Հ ամախույ ճ այ
օրինական սպառականի:

(Արտաստղագույն և Արեգակագույն լուսականի)

Բ Ա Գ Ա Խ

Ս. ՏԵՐ-ՑՈՎ ՀԱՆՆԻՍՅԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1885



8 - 3
15 - 61 այ

31 ~ 42

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Мая 1885 года.

ՄԱՏԱՂԱՐԱՍ

Աղեքսանդր Նիկողայոսեան

ԼԻԱՆՈԶԵԱՆՑԻՆ

Անկեղծ Սիրով

ՆՈՒԻՐՈՒԽ Է

ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

«Մեղուի» 1883 թուականի
119 և 120 №№ «Մի կաթիլ
արիւն» վերնագրով մի պատկեր
հրատարակուեցաւ թարգմանու-
թիւն պ. Աէյեադ Ամիրեանցի:
Յանկալով, որ սյդ գեղեցիկ պատ-
կերը մատչելի լինի մեր ժողո-
վըրդեանը, իբրև ընթերցանութեան
նիւթ, ահա հրատարակում ենք
նրան առանձին տետրակով:

Ամբատ-բէկ Լալայեանց.

10 Մայիսի 1885 թ.

Բագու:

ՄԻ ԿԱԹԻԼ ԱՐԻՒՆ



Պ. քաղաքի երկելի բժիշկներից մէկի
պ. կ-ի մօտ, վաղ առաւօտեան
յայտնվում է մի այցելու, ինչպէս
երկում է կասկածաւոր հիւանդ,
նա հրամայում է ծառային, որ փութով
յայտնի բժիշկին, թէ իւրաքանչիւր կոր-
ցրած բոպէն իրա համար մահաբեր է,
ուստի խոնարհաբար խնդրում է շուտով
ընդունել իրան:

Բժիշկը շտապով հագաւ իւր գի-
շերազգեստն և հրամայեց ծառային ըն-
դունել այցելուին:

Խսկոյն մոտաւ բժիշկի առանձնասե-
նեակը մի բոլորովին անծանօթ պարոն,

որը թէ իւր վարվողութեամբ և թէ իւր
խօսակցութեամբ նմանումէր թէ արդարե
նա հասարակութեան ընտիր դասակարգին
պատկանող մի անձն է: Երեսի գեղնուռ-
թիւնը հաստատում էր, որ այդ մարդը
սաստիկ տանջվում է, թէ ֆիզիքա-
պէս և թէ բարոյապէս: Աջ ձեռը փաթա-
թած էր սպիտակ թաշկինակով: Զը
նայելով նորա առողջ կազմուածքին,
ամեն մի վայրկեանում դուրսէին թըռ-
չում նորա տանջվող սրտի խորքերից
սաստիկ հառաջանքներ:

— Դուք էք բժիշկ պ. Կ.—Հարցրեց
ամենամեղմ և թոյլ ձայնով:

— Այո, պարոն:

— Ապրելով զիւղի մէջ, ես ձեզ
ձանաշել եմ որպէս մի զիտնական և բարի
բժիշկ, բայց և այնպէս չեմ կարող չը-
նկատել, որ հազիւ թէ մեր այդ տեսու-
թեան հետեանքը բաղդաւորութիւն
պատճառէ, որովհետեւ այն դառն հան-
գամանքը, որ ինձ ստիպել է գալ ձեզ
մօտ, անտանելի է ինձ համար:

Տեսնելով, որ հիւանդը հազիւ

կարողանում է ոաի վրայ կանգնել, բը-
ժիշկը առաջարկեց նստել և ցոյց տուաւ-
բազկաթոռը:

— Ես շատ դադրած եմ: Ամբողջ մի
շաբաթ է, որ չեմ քնում: Մի ինչ որ
պատահել է իմ աջ ձեռիս, բայց ես չեմ
հասկանում սա ինչ բան է. կարելի է պալար
ժանդախտ է, թէ մի ուրիշ վտանգաւոր
ցաւ . . . Սկզբից այնքան ուժեղ չեր
բայց հիմա սաստիկ այրվում է և անտա-
նելի կերպով տանջում ինձ, հետևաբար
ինչքան գնում է, այնքան ցաւը զօրեղա-
նում: Զը կարողանալով տանել այդ
գժոխային տանջանքը, շաապեցի կառք
նստել և մի կերպ հասնել ձեզ մօտ:
Ազաչում եմ, երկնքում Աստուած, երկ-
րում դուք, կարեցէք և վերցրէք ձեռիս
այն կտոր միան, որը սաստիկ տանջում է
ինձ, հակառակ դէպքում ես պարտաւո-
րուած կը լինիմ անձնասպանութեամբ
վերջ տալ իմ թշուառ կեանքիս:

Բժիշկը աշխատում էր հանգստաց-
նել այցելուին, ասելով թէ առանց
կտրելու էլ կարելի է բոլորովին հազար

որը թէ իւր վարվողութեամբ և թէ իւր
խօսակցութեամբ նմանում էր թէ արդարե
նա հասարակութեան ընտիր դասակարգին
պատկանող մի անձն է: Նրեսի գեղնուա-
թիւնը հաստատում էր, որ այդ մարդը
սաստիկ տանջվում է, թէ Փիզիքա-
պէս և թէ բարոյապէս: Աջ ձեռը փաթա-
թած էր սպիտակ թաշկինակով: Զը
նայելով նորա առողջ կազմուածքին,
ամեն մի վայրկեանում դուրսէին թըռ-
չում նորա տանջվող սրտի խորբերից
սաստիկ հառաջանքներ:

— Պուք էք բժիշկ պ. Կ. — Հարցրեց
ամենամեղմ և թոյլ ձայնով:

— Ա, յո, պարոն:

— Ապրելով գիւղի մէջ, ես ձեզ
Ճանաչել եմ որպէս մի գիտնական և բարի
բժիշկ, բայց և այնպէս չեմ կարող չը
նկատել, որ հազիւ թէ մեր այդ տեսու-
թեան հետեանքը բաղդաւորութիւն
պատճառէ, որովհետեւ այն դառն հան-
գամանքը, որ ինձ ստիպել է դալ ձեզ
մօտ, անտանելի է ինձ համար:

Տեսնելով, որ հիւանդը հազիւ

կարողանում է ոտի վրայ կանգնել, բը-
ժիշկը առաջարկեց նստել և ցոյց տուաւ
բազկաթոռը:

— Ես շատ գաղրած եմ: Ամբողջ մի
շաբաթ է, որ չեմ քննում: Մի ինչ որ
պատահել է իմ աջ ձեռիս, բայց ես չեմ
հասկանում սա ինչ բանէ. կարելիէ պալար
ժանդախտ է, թէ մի ուրիշ վտանգաւոր
ցաւ . . . Սկզբից այնքան ուժեղ չէր,
բայց հիմա սաստիկ այրվում է և անտա-
նելի կերպով տանջում ինձ, հետեաբար
ինչքան գնում է, այնքան ցաւը զօրեղա-
նում: Զը կարողանալով տանել այդ
դժոխային տանջանքը, շտապեցի կառը
նստել և մի կերպ հասնել ձեզ մօտ:
Աղաջում եմ, երկնքում Աստուած, երկ-
րում դուք, կարեցէք և վերցրէք ձեռիս
այն կտոր միան, որը սաստիկ տանջում է
ինձ, հակառակ դէպքում ես պարտաւո-
րուած կը լինիմ անձնասպանութեամբ
վերջ տալ իմ թշուառ կեանքիս:

Բժիշկը աշխատում էր հանգստաց-
նել այցելուին, ասելով թէ առանց
կտրելու էլ կարելի է բոլորովին հազար

մի տեսակ դեղբով հեշտութեամբ
բժշկել ձեր ցաւած տեղը:

— Ո՞չ, պարոն, ո՞չ, բացականչեց
այցելուն, ոչ մի դեղորայք և ոչ մի
սպեղանի չեն կարող օգնել ինձ: Պէտք
է կտրել: Ես միայն եկել եմ այն դիւ
տաւորութեամբ, որ դուք առանց ժամառ
նակ կորցնելու կտրէք և ազատէք ինձպէս
մի անբաղդին այն սարսափելի տանջանա
քից, որը անողորմաբար տանում է ինձ
գերեզման:

Բժիշկը խնդրեց ցոյց տալ ձեռք,
հիւանդը ներկայացրեց, ատամները կըրծա
տելով անտանելի ցաւից և այնուհետե
սկսեց ամենայն զգուշութեամբ բաց անել
իւր ձեռի թաշկինակը:

— Կախ և առաջ, յարգելի բժիշկ,
խնդրեմ երբէք չը զարմանալ այն բանի
վրայ, որը կը նկատէք այժմ: Իմ ցաւս
զարհուրելի է, դուք կարելի է զարմանաք,
բայց աղաջում եմ բոլորովին հեռու
մնալ կասկածանքից:

Չեռաբոյժ պ. Կ. հանդարտացրեց
հիւանդին:

Իբրև վորձուած բժիշկ, նա վաղուց
արդէն ընտելացած էր ամեն մի այդպիսի
տեսարամների, ուրեմն ոչ մի բան չէր
կարող զարմացնել նորան:

Աակայն, երբ բոլորովին մերկացրեց
հիւանդը իւր ձեռք, բժիշկը միանդամայն
զարհուրեցաւ այդ տարօրինակ տեսա-
րանից: Ձեռք բոլորովին առողջ էր, — ոչ մի
վէրք, ոչ մի խոց և ոչ մի վնաս չէր
երեսում, նա միւնոյն դրութեան մէջ
էր ինչպէս և միւս ձախ ձեռք: Զարհուր-
եալ բժիշկը բաց թողեց ձեռք:

Անձանօթը շաւից վերստին պոռաց
և ձախ ձեռով աջը բարձրացրեց դրաւ
կուրծքի վրայ: Նա դարձեալ աղաչեց
բժիշկին ասելով. — Ես եկել եմ միայն
այն նպատակով, որ ձեռիս ցաւած տեղը
կտրէք, և ոչ թէ այն դիտաւորութեամբ,
որ ձեզ հետ կատակերգութիւն խաղամ:
Կրկնում եմ, որ ես անողորմաբար տանջ-
վում եմ:

— Ո՞ն է ձեր ցաւող տեղը:

— Այ, այս տեղը, պարոն, պատաս-
խանեց անձանօթը, մատով ցոյց տալով

իւր ձեռի վրայ գտնվող երկու երակա
ներու մէջտեղը: Այն բոպէին սաստիկ
դողաց բոլոր մարմնով, երբ բժիշկը
զգուշութեամբ կամեցաւ ձեռ տալ ցաւող
տեղին:

- Այս տեղ էք դուք զգում ցաւ:
- Խիստ սոսկալի կերպով:
- Երբ մատս դնում եմ, ցաւ
զգում էք:

Անծանօթը ոչինչ չը պատասխանեց:
միայն երևեցաւ նորա գունատ երեսի
վրայ մի քանի կաթիլ արտասուք, որոնք
հոսում էին նորա աչքերից ցաւի կատա-
ղութիւնից:

- Զարմանալի է, ևս այստեղ ոչինչ
չեմ տեսնում:

— Ես ևս ոչինչ չեմ տեսնում,
բայց այն սոսկալի ցաւը, որ ես եմ զգում,
կամենում եմ գլուխս խիել այդ պատերին
ու այդպէս ոչինչացնել ինձ:

- Բժիշկը սկսեց քերթել կաշին և
յետոյ գլուխը շարժեց:

— Կաշին բոլորովին առողջ է,
արիւնի երթեւեկութիւնը նոյնպէս խա-

զազ: Ոչ խոց և ոչ խանձումն, այդ բու-
լորից ոչ մէկն էլ չը կայ: Կաշին նոյնպէս
կանոնաւոր է, ինչպէս և միւս տեղերում:

— Բայց ես կարծում եմ, որ նա
աւելի կարմրագոյն է քան միւս տեղե-
րում:

— Որտեղը:

Անծանօթը հանեց զբամանոցից իւր
մատիտը և նկարեց աջ ձեռի վրայ մի
շրջան, որի մեծութիւնը մի արծաթեայ
մանէթի չափ էր, և ասաց.

— Այս տեղը:

Բժիշկը մի առանձին հայեցաղու-
թեամբ նայեց հիւանդի վրայ և եղա-
կացրեց, թէ անծանօթը խելագարուած
է:

— Դուք, պարոն, մնացէք այսակղ,
ասաց բժիշկը, ես մի քանի օրից յետոյ
բոլորովին կ'առողջացնեմ ձեզ:

— Ես երբէք չեմ կարող սպասել:
Բոլորովին հեռացրէք ձեզանից այն կար-
ծիքը, թէ ես յիմար եմ կամ խելա-
գարուած, որ կարողանաք ինձ բժշկել:
Այն շրջանը, որ ես նկարել եմ մատի-

տով, ինձ դժոխային տանջանք է բերում։
Ես եկել եմ, որ դուք կտրէք այն տեղը։
— Ես այդ բանը երբէք չեմ անիլ,
պատասխանեց բժիշկը։
— Ինչո՞ւ համար։
— Որովհետեւ ձեր ձեռի վրայ ըս
կայ հիւանդութեան նշաններ։ Նա նոյնա
պէս առողջ է, ինչպէս և իմ։
— Ինչպէս երեսում է, դուք կար-
ծում էք, որ ես խելագարուել եմ, և
կամ աւելի պարզը ասած, երեխայաբար
ծիծաղում եմ ձեր վրայ, ասաց հիւանդը,
այդ միջոցում հանեց նա իւր զրպանից
հազար ֆլորինի արժողութիւն ունեցող
մի տոմանկ և դնելով բժիշկի սեղանի վրայ
ասաց. — Հիմա տեսնո՞ւմ էք, պարոն, որ
ես տղայաբար չեմ վարվում ձեզ հետ,
և այն ծառայութիւնը, որ ես անհամբեր
սպասում եմ ձեզնից, հաւատացէք, որ
ինձ համար թանկագին է և անհրաժեշտ։
Աղաչում եմ ձեզ, կտրեցէք այդ ցաւող
տեղը։

— Կրկնում եմ ձեզ, որ ոչ մի զօրեղ
բան աշխարհիս վրայ չէ կարող ինձ ստիւ-

պել գործել այդ եղեռնագործութիւնը.
— այսինքն վարվել մի առողջ մարդու հետ
այնպէս, ինչպէս մի մերձ ի մահ հիւանդի,
հետեաբար չէի էլ ցանկանալ, որ իմ
գործիքներովս անեն այդ։
— Ինչո՞ւ։
— Որովհետեւ այդ գործը կարող է
կասկածանքի մէջ գցել իմ մասնագիտու-
թիւնը և իմ վարկը, իսկ այնուհետեւ
կորցրած կը լինիմ իմ բոլոր նշանակու-
թիւնս էլ։ Իւրաքանչիւր անհատ ինձ
կարող է անուանել ամենայիմարներից
մէկը, որ այդպէս անազնիւ եմ վարուել
ձեզ հետ, կամ թէ շատերը կ'ենթադրեն,
որ ես օգտվելով ձեր առաջարկած դրա-
մից, կատարել եմ մի խելագարուած մար-
դու հրամանը.

— Իրաւունք ունիք։ — Բայց կը
ինդրեմ ձեզ, եթէ կարելի է, կատարէք
գոնեա միակ խնդիրքս։ Ես ինքս իմ
ձեռիս ցաւող տեղը կը կարեմ, միայն
ազնիւ խօսք տուէք, որ յետոյ կապէք
իմ վէրքս, որովհետեւ ես կարծում եմ, որ
ձախ ձեռս գուցէ անօգուտ գտնվի այդ

գործի համար:

Բժիշկը զարմացմամբ նկատեց, որ
անձանօթ մարդոյ բոլոր խօսակցութեանց
մէջ նշմարվում է կատարեալ ճշտու-
թիւն: Տարօրինակ հիւանդը հանեց իւր
կրկնաշորը ծալեց իւր թեղանիքը և
սկսաւ գազանաբար, առանց մի որ և իցէ
ցաւ զգալու իր գործը:

Մի բոպէից յետոյ, արդէն սուր
գործիքը մաի մէջ էր:

— Սպասեցէք... պոռաց բժիշկը,
երկիւղ կրելով, թէ մի գուցէ հիւանդը
անզգոյշ վարփելով իւր ձեռի հեա, վը-
չացնէ նա ևս իւր երակներն էլ: — Եթէ
դուք անհրաժեշտ էք համարում կրո-
բելը, թոյլ տուէք ես անեմ այդ:

Նա վերցրեց ածելին, իւր ձախ ձե-
ռով պահելով հիւանդի աջ ձեռը խընդ-
րեց անձանօթին, որ երեսը դարձնի
մրւս կողմը, որպէս զի երկիւղ չը կրի
արիւնի հոսանքից, ինչպէս սա պատա-
հում է բազմաթիւ հիւանդների հեա:

— Հարկաւոր չէ: Ընդհակառակը ես
պիտի ցոյց տամ թէ մինչեւ որ աստիճան

պիտի կտրէք:

Եւ իսկապէս նա մինչեւ վերջ սառնա-
սիրտ կերպով նայում էր այդ տխուր
տեսարանին, ցոյց տալով կտրելու
սահմանը: Նա բոլորովին չէր շարժում
իւր ձեռը, և երբ որ բժիշկը մի կտոր
միս հանեց նորա ձեռից, նա կատարեալ
առողջ մարդու պէս իսկոյն վերկացաւ
տեղիցը, որպէս թէ բոլորովին ցաւ չէր
զգում մինչեւ այժմն:

— Այժմ չէ այրվում:

— Բոլորը անցաւ, ծիծաղելով պա-
տասխանեց անձանօթը: Ցաւս բոլորովին
անյայտացաւ, կարծես թէ այդ բոլոր
չարչարանքի աղբիւրը այդ մի կտոր մնի
մէջ էր: Արիւնի հոսանքը ինձ այնքան
քաղցր է թւում, որպէս մի մարդ
դժոխային տանջանքից յետոյ բաղդի
բերմամբ կը հանդիպի մի զովարար զե-
փիւրի: Ինձ անսահման ուրախութիւն է
այն պատճառում: Թողէք խնդրեմ մի
փոքր գնայ, որ միակ մսիթ արութիւնս է
այդ:

Անձանօթը ցնձութեամբ նայում

էր, ինչպէս իւր կարմիր արիւնով ծածկվել
էր տան յատակը; Վերջապէս բժիշկը հա-
մոզեց, թէ հարկաւոր է շուտով կապել
ձեռի վէրքը:

Վ էրը կապելու ժամանակ երեսը
ստացաւ իւր նախկին գեղեցկութիւնը:
Ցաւի նշոյլը անդամ չէր երեսում և նա
շուտ-շուտ ծիծաղում էր բժիշկի առաջ:
Արդեօք ուր է այն սարսափեցնող մե-
քենան այժմ: Ապրելու ցանկութիւնը
կրկին վերականգնեցաւ: Երեսում էր, որ
նա արդէն շօշափելի կերպով կերպարա-
նափոխուել էր:

Երբ արդէն կապուած էր հիւանդի
վէրքը, նա ուրախ դէմքով մօտեցաւ և
բարեկամաբար սեղմելով բժիշկի ձեռը,
սսաց.

— Յարգելի բժիշկ, յայտնում եմ
իմ անկեղծ շնորհակալութիւնս ձեր ինձ
ցոյց տուած մարդասիրութեան համար:
Դուք ինձ բոլորովին առողջացրիք, իմ
առաջարկած վարձատրութիւնը մի ամես-
նաշնչին բան է, բայց ես պիտի աշխա-
տեմ, քանի որ կենդանի եմ մի այլ

կերպ վարձատրել ձեզ, ձեր արած բա-
րերարութեան համար:

Սակայն բժիշկը մի այլ կերպ էր
նայում այդ դրամին, նա չէր կամենում
ընդունել այն տոմսակը, որ մի փառաւոր
ժամ առաջ հիւանդը դրել էր սեղանի
վրայ: Անծանօթը ևս հրաժարվում էր
յետ վիրցնել իւր առաջարկած դրամը,
բայց տեսնելով որ բժիշկը վերաւորվում
է իրանից, նա առաջարկեց ձեռագէտ
բժշկին, որ այդ գումարը լիապէս յատ-
կացնի մի որեւիցէ բարեգործական նպա-
տակի, և ապա մնաք բարե ասելով
հեռացաւ:

Մի քանի օրից յետոյ պ. Կ. գնաց
այդ անծանօթի տունը, որտեղ մնաց
մինչեւ նկարագրած վերքի կատարեալ
առողջանալը. իւր այցելութեան ժա-
մանակ բժիշկը նկատեց, որ նա գործ
ունի մի հարուստ կալուածատէր, խելօք
և լուսաւորուած մարդոյ հետ: Բացի
սորանից, նա հասարակութեան ամենա-
նշանաւոր և գործունեայ անձնաւորու-
թիւններից մէկն էր: Այն ժամանակից, երբ

այդ անհասկանալի ցաւը ընդհատվեցաւ,
նորա հետ անկյայտացան նա ևս բարոյական
և ֆիզիքական չարչարանքներն էլ:

Հիւանդը, երբ բոլորովին առողջաւ
ցաւ, իսկոյն վերադարձաւ իւր գիւղն,
որտեղ կառուցված էր նորա հիանալի
ապարանքը:

Դիեռ չ'անցած երեք շաբաթ, մի աւ
ռաւօտ յանկարծ առաջվայ նման, ծաւ
ռան յայտնեց տիրոջ, դուշակելի մարդու
վերստին դալուստը:

Անձանօթը, որին շուտով ընդունեց
պ. Կ. մտաւ դահլիճը: Նրա ձեռը կրկին
փաթաթած էր սպիտակ մետաքսեայ թաշ-
կինակով, երեսի գծագրութիւնը ապացու-
ցանում էր, որ նա դարձեալ տանջվում
է: Չ'սպասելով բժիշկի հրաւիրելուն, նա
ընկաւ բաղկաթոռի վրայ, և չունենալով
զօրութիւն որ կարողանայ մի կերպ տանել՝
այդ անմեկնելի չարչարանքը, նա իսկոյն
լուռ կերպով մեկնեց ձեռը դէպի բժիշկը:

— Ի՞նչ է պատահել, հարցրեց
զարմացած բժիշկը:

— Դուք շատ խորից չեք վերցրել

իմ միսը, պատասխանից հիւանդը մե-
ռելային ձայնով: Ցաւս կրկնվել է: Նա
այրվում է առաջվանից էլ սաստիկ: Ես
այլ ևս կենդանի չեմ, իմ ձեռս կատար-
եալ փայտ է դառել ցաւից: Զը կամե-
նալով ձեզ անհանգստացնել, ես վճռեցի
սպասել տանը, մինչեւ որ ցաւս կոկիծը
կը տայ սրտիս և այնուհետև վերջ կը
տայ կեանքիս: Բայց տարաբաղդաբար ըը
կարողացայ հասնել ցանկացած նպատակիս:
Նա թէպէտ չէ ամփոփվում մի տեղ,
բայց անտանելի է... Նայեցէք իմ վրայ և
դուք կը հաւատաք բոլոր իմ ասածներին:

Անձանօթի գունատ երեսը արդէն
մեռելի դէմք էր բռնել և երևում էին
մի քանի կաթիլ մահուան սառն քրտինք-
ներ, որոնք անպատճելի դառնութեամբ
հոսում էին հիւանդի ճակատից: Բժիշ-
կը բացեց փաթաթուած ձեռը, կտրված
և դուրս բերված մոի տեղը կրկին լըը-
ցվել էր և կարծես թէ ոչինչ չէր պա-
տահել սորա ձեռի հետ, վերըի երեսի
կաշին բոլորովին չէր զանազանվում մար-
մայ միւս տեղերի կաշիներից: Շնչերակը.

և փուլում էր իւր կարգին, տաքութիւնն
բոլորովին չը կար, սակայն հիւանդի
մարմնոյ բոլոր անդամները սաստիկ գու-
ղում էին:

— Վերջապէս սա անբացատրելի է,
բացականչեց ապշած բժիշկը: Ես իմ
կեանքիս մէջ առաջին անգամն է, որ
այդ պիսի մի անհասկանալի ցաւի եմ
հանդիպում:

— Այս, սա հրաշք է, զարհուրելի
հրաշք, սիրելի բժիշկ, ասաց հիւանդը,
— դուք սորա պատճառը մի՛ որո՞նէք,
միայն աղաչում եմ վերցրէք շուտով
ձեր գործիքը ու սկսէք ինչքան կարելի է
աւելի խորը կտրել ցաւած տեղը:

Բժիշկը վերցրեց իւր ածելին ու ան-
ծանօթի ցանկութեան համաձայն, սկսեց
նորից կարել միւնոյն տեղը առաջուանից
էլ սաստիկ: Այդ բոպէում բժիշկը նկա-
տեց, որ հիւանդի նախկին առողջարար
գոյնը կրկն վերականգնեցաւ, նորա մեռ-
ուելային գոյնը անհետացաւ և ընդունեց
իւր առաջվայ կանոնաւոր կերպարանքը:
Բայց նա այլ ևս չէր ծիծաղում:

1001
265

Այս անգամ հիւանդը մուայլ տըլս-
րութեամբ մօտենալով բժիշկին ասաց, —
Ծնորհակալ եմ ձեզնից, յարգել բժիշկ,
ցաւ այլ ևս չեմ զգում, բայց եթէ մի
քիչ ժամանակից յետոյ վերստին կը կը
նվի, երբէք չը զարմանաք:

— Այս պարոն, դուք բոլորովին այդ
մասին մի մտածէք:

— Ես հաստատը գիտեմ, որ մի
ամսից յետոյ կրկն կը նորոգվի իմ ցաւս,
տիրութեամբ պատասխանեց հիւանդը,
բայց ինչ պիտի արած, թող Արարիչը
ինքը խնայէ... ցտեսութիւն:

Հետևեալ օրը, բժիշկը պատմեց իւր
բարեկամներին և արհեստակիցներին այդ
տարօրինակ, անհասկանալի և զարհուրելի
տեսարանները, և իւրաքանչիւրը նոցանից
յայտնեց իւր կարծիքը, բայց և այնպէս
ոչ ոք չը կարողացաւ մի որոշ եղբակացու-
թեան հասնել:

Մի ամսից յետոյ պ. Կ. անհամբեր
սպասում էր խորհրդաւոր մարդու կը ը-
կին ներկայանալուն: Բայց անցաւ մի
ամբողջ ամիս և ոչ ոք չ'երեսեցաւ:



Անցան էլի մի քանի շաբաթներ, վերջապէս բժիշկը ստացաւ մի նամակ գիւղեց, որտեղ ապրում էր հիւանդը: Գրութիւնը կարծ էր և առանց ստորագրութեան: Բժիշկը նկատեց, որ նամակը զրված էր իւր հիւանդի ձեռով, որից նա եղակացրեց թէ ցաւը այլ ևս չէ կրինուել, որովհետեւ նա կարող էր արգելք լինել նրա գրութեան:

Նամակը ամփոփում էր իւր մէջ հետևեալ բովանդակութիւնը:

«Թանգագին բժիշկ, ես չեմ կամենում թողնել ձեզ և ընդհանուր բժըշշկականութիւնը կասկածանքի մէջ ինձ պատահած գաղտնի ցաւի մասին, որը տանում է ինձ գերեզմանի դուռը և աւելի խորը:»

«Մի շաբաթ սորանից առաջ կրկին ցաւս նորոգվեցաւ, բայց ես այլ ևս չեմ կամենում պատերազմել չարչարանքիս հետ: Այս բոպէիս, որ գրում եմ ձեզ ներկայ նամակս, վառուած բուտը դրած եմ ձեռիս վրայ, որպէս գեղ կակղացուչից սպեղանի, քանի բուտը այրվում է,

ես ցաւ չեմ զգում: Նա այնքան զգալի չէ, ինչքան նախկինը:

«Դեռ վեց ամիս սորանից առաջ ես ամենաբաղդաւոր մարդկանցից մէկն էի: Անհոգ կերպով ծախում էի իմ կալուածքիս եկամուտը, ամենքի հետ բարի յարաբերութեանց մէջ, հետեւաբար վայելում էի բոլորի սէրը, մի խօսքով զգում էի այն անսահման ուրախութիւնն, որը կարող էր մի երեսուն և հինգ ամեայ մարդուն հաճելի լինել: Մի տարի սորանից առաջ սիրահարուած լինելով, ես ամուսնացայ... իմ սիրած օրիորդը յայտնի էր թէ իւր գեղեցկութեամբ և թէ իւր խոհեմութեամբը: Նա ստացած էր չափազանց լաւ կրթութիւն, և վարում էր իմ հարեւան կոմնի տանը դաստիարակչուհու պաշտօն: Նա ամենաաղքատ ընտանեաց աղջիկ էր, բայց սիրեց ինձ, ոչ թէ իմ աղջուութեան կամ հարստութեան համար, այլ նուրբ և մանկական սիրով: Անցաւ ամբողջ վեց ամիս իմ ամուսնացած օրից և ես մի այնպիսի բաղդաւորութեան մէջ

էի զգում ինձ, որ կարծում էի, թէ
իւրաքանչիւր նոր օր նոր բաղդ է խօս-
տանում ինձ: Պատահում էր ինձ մի
ամբողջ օր գնալ Պ. բաղաքը իմ սեպ-
հական գործերիս պատճառաւ, բայց կինս
բոլոր իմ բացակայութեանս ժամանակ մի
կատարեալ ողբերգութեան մէջ էր լիւ
նում: Նա ինձ հանդիպում էր երկու
մղոն հեռու տնից: Ախնում էին գիշ-
շերներ, երբ ուշանում էի, նա երբէք
չէր քնում և անհամբեր սպասում էր
իմ գալստեանը: Եթէ պատահում էր
նրան գնալ իւր վաղեմի բարեկամշկոմ-
սի տունը, որտեղ դեռ մի ժամանակ
ծառայում էր վարժուհու պաշտոնով,
և որի սէրը կրկնապատիկ վայելում էր,
անհնարին էր նրան վեց ժամից առա-
ւել մնալ այնտեղ, և այն էլ տիրու-
թեան մռայլ ամպերով պատած: Նրա
սէրը այնքան զօրեղ էր, որ միշտ հրա-
ժարվում էր մի որեկից մարդու հետ
պարել, չը կամենալով իւր ձեռը յանձ-
նել օտարին, և զարմանալին այն էր,
որ ոչ մի բան նրան այնքան խորթ և

զզուելի չէր թւում, ինչքան ուրիշների
քաղցրախօսութիւնը, որը անտանելի էր
նրա համար: Մի խօսքով իմ կինս մի
անմեղ, խոնարհ և մանկական բնաւորու-
թեան տէր էր, որ միայն ինձնով էր
ուրախ և միշտ իմ վրայ մասձում,
հետեւըար անիծում էր նա այն գիշե-
րային երազները, որոնց մէջ նա ինձ չէր
տեսնում:

« Զը գիտեմ երբ, միայն մի ինչ որ
դե կարծես ինձ ասեց. բայց եթէ կնու-
ջըդ այդ բոլոր գործունէութիւնքն իս-
կապէս կեղծաւորութիւն լինի՞ն:

« Մարդիկ շատ ժամանակ բաւական
յիմարանում են, երբ անսահման բաղ-
դաւորութեան մէջ ևս որոնում են չար-
չարանքի աղբիւրներ:

« Կինս, ունէր ձեռագործի մի սեղան,
որի գզբոյը նա միշտ կողպում էր և
բանալին էլ վերցնում իւր հետ: Ես
այդ միշտ նկատում էի: Նա երբէք չէր
մոռանում բանալին թողնել արկղի
վրայ և աշխատում էր միշտ գաղտնի
պահել:

« Հետաքրքրութիւնը ինձ հանգստութիւն չէր տալիս, և միշտ մտածում էի, արդեօք ի՞նչ կայ գզբոցում, որ այդ պէս մեծ զգուշութեամբ թաքցնում է ինձնից... Ես բոլորովին կորցրի իմ բանականութիւնս: Ա.ՅԼ ևս չէի հաւատում նրա քաղցրաբարբառ խօսքերին, նրա ինձ ցոյց տուած սէրը կեղծ էի համարում, նրա քննքոյշ համբոյրների ամեն մէկը ատրճանակի հարուած էի համարում, մի խօսքով նրա ընդհանուր շարժուածքը մի հրեշային վարմունք էի համարում: Բայց մի հարց, որ կեանքի և մահու խնդիր էր, և որը անողոքելի կերպով տանջում էր ինձ. սա իմ մէջ յարուց ված կասկածն էր, թէ արդեօք կնոջս այդ վարմունքը խսկապէս կեղծաւորութիւն չէ...»

« Մի գեղեցիկ առաւօտ կնոջս բարեկամ կոմսի կինը եկաւ մեր տուն, և բաւական խօսելուց յետոյ, խնդրեց կնոջս որ գնան իրանց տուն ուրախ ժամանակ անցկացնեն: »

« Որովհետեւ մէք կալուածքը մի քա-

նի մղոն կոմսի բնակարանից հեռու էր, ես ևս խոստացայ իրիկնապահին գնալ կնոջս ետեւից: »

« Կառքը, որի մէջ նստած էին երկու տիրուհիք, ինչպէս որ սլացաւ մեր դռնից, ես շտապով ժողովեցի իմ տանըս մէջ եղած բոլոր բանալիքը և սկըսեցի փորձել մի կերպ արկղը բանալու: Բաղդի բերմամբ ինձ յաջողուեցաւ: Ես այդ ժամանակ նմանվում էի այն աւազակին, որը առաջին անգամ համարձակվում է մի որևէ եղեռնական գործի մէջ մտնել: Իմ կնոջս գաղտնիքների առաջին գողն ես եղայ: Ձեռքերս դողում էին, երբ ես զգուշութեամբ հանում էի արկղի միջեց այն բաները, որոնք կինս իւր ձեռողին էր դարսել, ես երկիւղ էի կրում, որ մի գուցէ կինս նկատի թէ մի որևէից այլ մարդու ձեռք է մտել նրա մէջ: Սիրաս Ճմլվում էր և տրաքվում... Հարունակելով իմ գործը, յանկարծ մի փոքրիկ ձեռագործի տակ երկեցաւ շարք նամակներ: Տեսնելով ենթադրած կասկածանքիս առաջին պտուղը, կարծես կայ-

ծակի մի հարուածը հոգով և մարմնով
դլրեց, քցեց ինձ մի ապականուած
մթնալրտի մէջ և այնուհաւ կորցրի իմ
բոլոր յիշողութիւնս էլ... Այս, սոքա
այն նամակներիցն էին, որոնց բովանդաւ
կութիւնը հէնց առաջին անդամից կարելի
է եզրափակել:

« Առքա սիրահարական նամակներ
էին:

« Նամակները փաթաթած էին վար-
դագոյն երիզով և ծայրերը կապած ար-
ծաթաթել ժապաւինով:

« Մերձենալով կապոցին, ինձնում
յղացաւ մի առողջ միտք. արդեօք սա
լաւ է: Մի արժանահաւատ մարդու
գործ է իմանալ իւր կողակցի բոլոր այն
գաղտնիքները, որոնց ունեցել է նա մին-
չե ամուսնանալը, գեռ ևս իւր օրիորդու-
թեան ժամանակը: Արդեօք պարտաւոր է
նա ինձ հաշեւ տալ իւր ունեցած գա-
ղափարների մասին, որոնց ժամանակ, նա
մինչե անդամ չէ էլ ճանաչել ինձ:
Իրաւացի՞ է արդեօք իմ նախանձը, և ո՞վ
է կարող կասկածել նրա վրայ:

« Անիծեալ դեր կարծես էլի մօ-
տեցաւ ինձ և ասաց.—բայց կարելի է
այդ սիրահարութիւնը քո ամուսնանա-
լուց յետոյ է և կնոջ բոլոր կեղծ շողու-
քորթութեան պատճառը այդ անիծեալ
նամակներն են: Ես բացի երիզը: Իմ մօտ
չը կար գէթ մի հայելի, որ կարողանայի
ինքս ինձնից ամաչել: Ես թերթեցի
նամակները միառմի և բոլորն էլ կարդացի
մինչե վերջը...

« Ո՛հ, Արարիչ իմ, ինչպիսի զար-
հուրելի ժամ էր ինձ համար:

« Ինչեր չը կար այդ նամակների
մէջ: Ծայրահեղ սառութիւն, դաւաճա-
նութիւն, խաբէութիւն և այլն..., բայց
զարմանալին այն էր, որ այդ նամակների
հեղինակը իմ ամենամօտ բարեկամներից
մէկն էր: Ինչպիսի ո՛՛, ինչպիսի բորբոք,
ինչպիսի հաւաստիք սիրոյ, ինչպիսի խոր-
հուրդներ իւր ամուսնոյն խաբելու հա-
մար... և այդ բոլոր անզգամնութիւնները,
գարշելի գաղանութիւնները, երևակայէք,
կատարվումեն իմ ամուսնանալուց յետոյ,
ուղիղ այն ժամանակ, երբ ես աշխարհիս

ամենաերջանիկ և բաղդաւոր մարդկանցից
մէկն էի համարում ինձ: Հարկաւոր է
արդեօք ասել, թէ ինչեր չը կրեցի ես այդ
օրը, երեակայեցէք մահուան դառնագին
կաթիլները ես ըմպում էի այն ժամանակ,
որպէս շամպայն: Նամակները կարդալ առ
ւարտելուց յետոյ վերափառ սարքեցի առաջ-
վայ պէս և երիզի ծայրերը նոյնպէս ար-
ծաթաթել ժապավէնով կապելով ամեւ-
նայն զգուշութեամբ դրի ձեռագործների
տակ և այնուհետև կողպեցի տիկնոջս
արկղը, որպէս թէ ոչինչ չը գիտեմ:

«Ես զիտէի, որ առանց ինձ սպա-
սելու, նա անշուշտ պիտի վերադառնայ
տուն, և այնպէս էլ եղաւ: Յանկարծ
կառքի միջեց աղաւնոյ պէս թռչելով
պատշգամբի վրայ, ուր ես կանգնած էի,
սկսաւ առաջուանից էլ անհամեմտ
քաղցր կերպով գրկել ինձ և սիրոյ համ-
բոյրներ վերցնել ինձնից: Ես աշխատում
էի ինձ այնպէս պահել որ կինս ոչինչ
չը հասկանայ: Մենք շատ խօսեցինք և
ընթրիեից յետոյ բաժանվելով, իւրա-
քանչիւրը մեզնից մըտաւ իւր ննջարանը

քնելու: Ես բոլորովին աչքերս չէի խփում
և անհամբեր սպասում էի մէկ ժամին:
Ինչպէս որ ժամերը զարկեցին, մի քառորդ
ժամ մնացած մէկին, ես ամենայն զգու-
շութեամբ վերկացայ անկողնիցս մտայ
կնոջս ննջարանը: Նորա գեղեցիկ չէկ գլուխը
դրած էր սպիտակ բարձերի վրայ, ինչպէս
երբեմն նկարում են երինային հրեշտակ-
ներին սպիտակ ամպերի մէջ: Ինչպիսի
հրաշք է գործել մի սարսափելի յանցանք,
մի անմեղ արարածի հետ: Ես ամենայիմար
յամառութեամբ սկսեցի լուծել անբացա-
արելի հարցը:

«Սատանան անողոքելի կերպով ու-
տում էր իմ սիրտը...»

«Ամենահանդարտ քայլերով մօտե-
ցայ և աջ ձեռս գնելով նրա պարանոցի
վրայ շուտով խեղղեցի: Իմ կատաղու-
թեանս ժամանակ. նա մի վայրկեան բա-
ցեց իւր զմայլեցուցիչ աչքերը և մի զար-
մանալի հայեացք ձգելով իմ վրայ կրկին
փակեց: Նա մեռաւ, առանց ընդդիմանալու,
որպէս թէ ննջեց: Նա իւր կենդանու-
թեան ժամանակ երբէք չէր վերաւորվել

ինձնից, նոյնպէս չել վերաւորվեցաւ իրան սպանելու ժամանակն էլ։ Միայն մի կառ թիւ արիւն դուրս թռաւ նրա բերանից և ընկաւ իմ ձեռիս վրայ։ Բայց գիտէք որտեղ, ողիղ այնտեղ՝ որը անպատճելի կերպով տանջում էր ինձ։ Ես նկատեցի նրան հետեւալ օրը երբ արդէն չորացել էր։ Մենք թաղեցինք նրան առանց մի մարդու իմաց տալու, և որովհետեւ ես տպրում էի միայնակ, ուրեմն հաւանական էր, որ ոչ ով էլ չուներ իրաւունք ինձանից հաշիւ պահանջելու իմ գործունէութեանս համար։ Ես նոյնպէս լաւ դիտէի, որ նա չուներ ոչ բարեկամ և ոչ մի կարեկցող, վասն որոյ կարգադրեցի որ շուտով թաղեն, որպէս զի իմ բարեկամներից էլ ոչ ոք չը կարողանայ իւր ժամանակին դալ ու տեսնել նորա թաղման հանդէսը։

« Ա երադառնալով գերեզմանատնից ես բոլորովին չէի զգում ոչ մի խայ թռմն խղճմանքի։ Ես շատ անգութ էի և քարասիրտ, բայց նա արժանի էր այդ տեսակ վարձատրութեան։ Ես նրան ան-

պահման ատում էի և աշխատում բռն լորովին մոռանալ նրա կերպարանքը, սառ կայն երբեմն մտաբերում էի նրա հրեշտակային գեմքն և իսկոյն ատում։ Եղեռանգործները մինչև անգամ զղջում են իրանց գործած յանցանքից յետոյ, բայց ես երբէք ոչ։

« Մանելով ապարանքս, ես գտայ այն տեղ կնոջ ընկերուհուն, կոմի կնոջը։ Ես այնպիսի գաղտնի կերպով կարգազրել էի կնոջս թաղումը, որ մինչև անգամ կոմի կինն էլ, չէր կարողացել համել իւր վերջին հրաժեշտը տալու։ Երբ նա ինձ տեսաւ, սաստիկ դրդաց բոլոր մարդ մնով։ Ինձ միսիթարելու համար նա ինչէր չէր ասում, որպիսի ցաւակցութիւն, որպիսի ողը, ինչ տեսակ քաղցրաբարբառ արտասանութիւններ։ Ահա ինչով էր կամենում իմ այրված սիրաս առնել և իմ նախկին ուրախութիւնս վերականգնել։ Բայց նրա խօսքերը ինձ համար միւնոյն նշանակութիւնը ունէին, ինչպէս մի անտառում բնակվող թաշունի ծլվոց։

« Միթէ ես կարօտ էի միսիթարու-

թեան, և լսում էի նորա խօսքերը... Ես
երբէք չէի տխուր. Վերջապէս ամենաւ-
հանդարտ քայլերով մօտենալով նա ինձ
և սեղմելով իմ ձեռը ասաց.

— «Յարգելի բարեկամ, ես պարտաւ-
որուած եմ յայտնել ձեզ իմ գաղտւ-
նիքը... Սակայն, մեծայոյս եմ, որ դուք
ինչպէս մի ազնիւ բնուորութեան տէր
մարդ, կը ներէք իմ համարձակութեանս
և կը պահէք ձեզ մօտ որպէս ձեր սե-
պհականութիւնը: — Ես չը կարողանալով
պահել տանս մի շարք սիրահարական
նամակներ, յանձնեցի ձեր կնոջը, որ պահի
մի գաղանի տեղ, ուստի աղաջում եմ,
վերադարձրէք ինձ այն նամակները:

«Դեռ չ'աւարտած նա իւր խօսակ-
ցութիւնը, մի սարսափելի դող մոտ իմ
մարմնոյ, մէջ, և սկսեց կայծակի հա-
րուածներ տալ սրտիս: Արուեստական
սառնարտութեամբ ես հարցրի նամակ-
ների բովանդակութիւնը: Իմ առաջարկած
հարցին, կոմնի կինը սաստիկ կատաղու-
թեամբ, բարձրանալով տեղեցը պատաս-
խանեց.

— «Պարո՞ն, ձեր կինը ձեզնից բարի
հոգի էր, նա երբ ստացաւ ինձնից նա-
մակները, երբէք չը հարցրեց նոցա բո-
վանդակութիւնը: Նա ինձ ազնիւ խօսք
էր տուել ոչ մի ժամանակ չը նայել
նամակներին, և ես վստահ եմ որ այդ-
պէս էլ եղել է: Նա ունէր ազնիւ սիրտ
և խօսքը ձշառութեամբ էլ պահում էր:

— «Լաւ, պատասխանեցի ես, ասա-
ցէք ինդրեմ ախր ի՞նչպէս ճանաչեմ ձեր
ծրարները:

— «Առքա փաթաթուածեն վարդա-
գոյն երիզով և Տայրերը կապած արծա-
թեայ ժապավէնով:

«Վերցրի իմ կնոջս բանալիքը, և
սկսեցի որոնել ծրարները, որպէս թէ
ոչինչ չը գիտեմ, թէպէտ ես լսւ գիտէի
նոցա որտեղ լինելը, բայց գիտմամբ էի
անում այդ բոլորը, որ նա ոչ ինչ չը
կասկածի:

— «Աս է... Հարցրի ես վերադարձ-
նելով իրան իւր ծրարները:

— «Այսուհետեւ, այսուհետեւ էք, փա-
թաթաթուած ծրարները նոյն դրութեամբ

են, ինչպէս որ ես յանձնել էի ձեր կը-
նոջը, ինչպէս երևում է, նա երբէք
ձեռք չէ տուել նոցա:

« Աս շուտով բաժանուեցաւ ինձ-
նից և նստելով կառքը հեռացաւ: Խեղջ
կին, նա արդարութեամբ վարփում է իւր
ամուսնոյ հետ, նրա մարդը ինչպէս երե-
վում է ամենայիմար կ կոպիտ մարդ-
կանցից մէկն է, որ չէ հասկանում իւր
կնոջ այդպիսի անսառակ գործունէու-
թիւնը: Եթէ ես լինէի այդ մարդու նման,
լիապէս արժանի էի այդ պիսի մի վերին
աստիճան անբարոյական կնոջ ամուսնոյ
տիտղոս կրելու: Բայց իմ կինս... ՞Հ,
Աստուած իմ, ինչպիսի բարի հոգի, ազ-
նիւ և հրեշտակի նման սուրբ սիրտ ունէր:
Նա սիրում էր իւր ամուսնոյն դեռ այն
ժամանակ, երբ այդ վերջինը անպատմելի
կերպով սպանեց նորան...

« Ես ըս գիտեմ յետոյ ինչ պատառ
հեցաւ ինձ հետ: Ես զարհուրելի կեր-
պով խոստովանվեցի միայն այն ժաման-
ակ, երբ ինձ տեսայ գերեզմանատանը
դադաղի մօտ նստած: Ես թէպէտ այն-

քան խելագարուած չէի, որ ցանկանայի
որ վերստին նա յարութիւն առնէր, բայց
զգում էի որ շօշափելի կերպով կորցրել եմ
իմ բանականութիւնս, որովհետեւ ուզում
էի խօսել նորա հետ, կարծելով որ նա
կը լսի ինձ:

— « Եւ այդպէս դու իմ պահա-
պան հրեշտակս, սիրում էիր ինձ կենդանի
ժամանակից, սիրում ես նա ևս մեռած
էլ, աղաչում եմ ցոյց տուր ինձ քոյ
վրէժինդրութիւնը այս րոպէիս, մի
թողնիլ տանջանքս միւս աշխարհի հա-
մար, կրկնում եմ տանջիր և չարչարիր
ինձ այնպէս, ինչպէս ես քեզ սպանեցի:
Մի սպասիլ որ միայն լոկ իմ մժհովս
բաւականանաս:

« Այսպէս դառն կերպով խօսում
էի ես սառը հողի հետ, յանկարծ ննջեցի,
կամ աւելի պարզը ասած կորցրի իմ
բոլոր յիշողութիւնս էլ, միայն այսքանը
գիտեմ, որ սկսեցի ցնորվել: Ես տեսայ
որ գագաղի ծածկոյթը բարձրացաւ և
ննջեցեալը ամենայն հանդարտութեամբ
վեր կացաւ միջիցը: Ես պառկած էի

անշարժ դադաղի մօտ և ձեռիս մէկը
մեկնելով հանգուցելոյ աջ կողմը, միւսն
էլ դրի նորա զլիստակը: Շրթունքները
սպիտակ ձիւնի պէս փայլում էին և
երեսում էր նոցա վրայ մի կաթիլ արիւն:
Նա ամենայն խոնարհութեամբ բացեց
իւր աչքերը և համբուրելով իմ աջ
ձեռս կրկին փակեց այնպէս, ինչպէս
նրան սպանելուս ժամանակը... Յետոյ
դադաղի ծածկոյթը վերստին ծածկեց
մեռածին և սորանով անյայտացաւ,
բայց նորա մի կաթիլ արիւնը մնաց աջ
ձեռիս վրայ:

« Շուտով ինձ զարթեցրեց ձեռիս
սաստիկ ցաւը, որը ամեն րոպէ կատա-
զութեամբ սաստկանում էր: Ես շտա-
պով վազեցի դուրս, որպէս զի կարո-
ղանամ մի կերպ անբաղդ դռւիսս ազա-
տել ցաւից, բայց բոլոր իմ աշխատանքս
ի զուր անցան: Ինձ ոչ ով չէր տեսնում,
որովհետեւ առաւտեան զանդակը դեռ
նոր էին խփում, որ ես դուրս էի գնում:
Արիւնի կաթիլը այլ ևս չէր երեսում,
իսկ արտաքին ցոյց էր ամենեին չը կար,

որ կարողանայի մի բան հասկանալ, բայց
այն տեղը, ուր կաթել էր արիւնը, սաս-
տիկ և անողոքելի կերպով այրվում էր:
Ցաւը ինչքան գնում էր, այնքան սաստ-
կանում: Երբեմն ես քնում էի, միշտ
ունենալով սրտիս մէջ ցաւի կսկիծը:
Բայց ես ի հարկէ ոչ ոքի չէի կարող
յայտնել այդ բանը, և գուցէ չը հաւա-
տային էլ ինձ: Դուք էիք միակ վկայս
և տեսնում, թէ ինչպէս էի հանգստա-
նում երբ կտրում էիք ցաւող տեղը: Նա
մանաւանդ, երբ կտրված տեղը առողջա-
նում էր, իսկոյն ցաւն էլ կատաղու-
թեամբ կրկնվում: Հիմա վերստին նո-
րոգվել է, սա երկրորդ անգամն է, բայց
ես այլ ևս չունիմ կարողութիւն, որ
կարողանամ քաջ զինւորի պէս պատե-
րազմել նորա դէմ: Ես, մի ժամկց յե-
տոյ արդէն մեռած կը լինիմ: Ինձ մը-
խիթարում է միայն այն միտքը, որ մի
անգամ երբ կիսս վէճինդիր եղաւ այս-
տեղ, նա կը ներէ ինձ հանդերձեալ
աշխարհում... Նորհակալ եմ ձեզնից,
յարդելի բժիշկ, ձեր կրած նեղութեան

Համար: Ամենակարող՝ Աստուածը թող
վարձատրէ ձեզ»:

Մի քանի օրից յետոյ, արդէն լրա-
գիրներում երևեցաւ մի լուր, թէ երե-
ւելի հարուստ և կալուածատէր պ. Ա.
անձնասպանութեամբ վերջացրել է իւր
կեանքը: Մի քանիսները կարծեցին թէ
ինքնասպանութեան միակ սպատճառը կնոջ
մահն էր, որին անսահման սիրում էր նա,
մի քանիսներն էլ—թէ անբուժելի ցաւն
էր, իսկ ամենահասկացող մարդիկ ասում
էին, թէ նա ցնորված էր և անբուժելի
վերքը գոյութիւն ուներ միայն նորա ե-
րևակայութեան մէջ:



188

2013

